ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 14 » մարտի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____Հ. Այունց

ՍՑ-ԳԲԽ-12/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.02.2017թ. թիվ 03/73-3/2280-17 գրությամբ ներկայացված «Դելտա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00004912) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության 25.11.2016թ. թիվ ԴՎԱ/3711 գրության հիման վրա, 02.12.2016թ. թիվ 03/73-3/26863-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Դելտա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և

այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության 25.11.2016թ. թիվ ԴՎԱ/3711 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնը 06.02.2017թ. թիվ 01/04.1/350-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 02.12.2016թ. թիվ 03/73-3/26863-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է «Դելտա» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ, Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից ***մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (04.07.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում «Դելտա» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ընկերությունը կարող է ներառվել Ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.02.2017թ. թիվ 03/73-3/2280-17 և 09.03.2017թ. 03/73-3/4094 գրություններով Կենտրոնին հայտնել է, որ «Դելտա» ՍՊԸ-ն Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ ***04.07.2016թ.-ից*** հաշված մեկ տարվա ընթացքում՝ ***08.02.2017թ. և 28.02.2017թ. կրկին հայտեր է ներկայացրել*** համապատասխանաբար «ՇՄԳԸԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-17/1» և «ՇՀԱՊՁԲ-15/16-3-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու համար, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել բողոքարկման գործընթաց՝ «Դելտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. «Դելտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 05.12.2016թ. թիվ 01/04.1/4415-16 գրությամբ դիմել է «Դելտա» ՍՊԸ-ին:

Ընկերությունը 19.12.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ վերջինս ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական սարքավորումների, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/47» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել, ընդ որում 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինները ներկայացվել են որպես համարժեք:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից, իսկ 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով «Դելտա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը գրությամբ հայտնել է նաև, որ առաջին դեպքն է, երբ «Դելտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքները դիտվել են որպես ոչ համարժեք կամ չեն համապատասխանել պարամետրերով:

«Դելտա» ՍՊԸ-ն, ի լրումն 19.12.2016թ. գրության, 31.01.2017թ. ներկայացրած գրությամբ հայտնել է, որ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրամադրված մասնագիտական եզրակացության՝ Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով սահմանված «Կշեռք էլեկտրոնային» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով պահանջվող գծայնությանը չի համապատասխանել, արդյունքում «Դելտա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է:

Ըստ CITIZEN ընկերության պաշտոնական կայքի՝ (www.citizenscales.com) պահանջված CITIZEN 3102 կշեռքի տեխնիկական բնութագրով սահմանվել է կշեռքի գծայնությունը ± 0,02 գր է, ոչ թե ± 0,01գր., ինչպես սահմանված է եղել Ընթացակարգի տեխնիկական բնութագրում:

Ընկերությունը հայտնել է, որ վերջինիս կողմից Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքին, որպես համարժեք ներկայացվածը, լիովին համապատասխանում է Ընթացակարգի տեխնիկական բնութագրում առկա պարամետրերին և որոշ պարամետրերով ունի առավելություն՝ BPS-51 Plus:

«Դելտա» ՍՊԸ-ն գրությամբ նշել է, որ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի համար նույնպես ներկայացրել է համարժեք ապրանք, սակայն Ընկերությանը հայտնի չէ, թե ինչ նպատակների համար են նախատեսված պահանջված կշեռքները, սակայն, քանի որ նրանք վերաբերում են ինդուստրիալ բարձր ճշգրտությամբ (պրեցեզիոն) կշեռքների դասին, ուստի առաջարկվել է որպես համարժեք BWL-60 (5-րդ չափաբաժին), BPS-51 Plus (6-րդ չափաբաժին) Boeco GmbH մոդելի կշեռքները:

03.03.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-12/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին Ընկերության ներկայացուցիչը ներկայացրել է առարկություն, համաձայն որի՝ «Դելտա» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված որևէ խախտում:

Մասնավորապես, Ընկերությունը ներկայացրել է առաջարկվող ապրանքների հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություն, որում նշել է, որ 6-րդ չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը ***համարժեք է հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին:*** Ըստ Ընկերության՝ Հրավերով պահանջվող և Ընկերության կողմից առաջարկված ապրանքի միջև առկա է եղել ընդամենը մեկ տարբերություն՝ 20 կգ-ի փոխարեն՝ Ընկերությունն առաջարկել է 10կգ-ոց կշեռք: Ընդ որում, Ընկերությունը չի ներկայացրել իրականությանը չհամապատասխանող՝ կեղծ տեղեկություն այն մասին, որ իր կշեռքը 20կգ է, ընդամենը՝ Ընկերության կարծիքով իր առաջարկած տարբերակը համարժեք է եղել հրավերով նախատեսված ապրանքին, իսկ կիլոգրամների տարբերությունն էական չի կարող հանդիսանալ:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարության, 25.11.2016թ. թիվ ԴՎԱ/3711 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է, որ Ընթացակարգին հայտ ներկայացրած «Դելտա» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, սակայն պարզվել է, որ Ընկերության կողմից ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերը տարբերվում էին հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից և համարժեք չէին դրան: «Դելտա» ՍՊԸ-ի կողմից առկա անհամապատասխանությունը չի շտկվել, արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընկերության տեխնիկական բնութագրերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համարժեք և մերժել վերջինիս հայտը 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

Միաժամանակ, Պատվիրատուն վերը նշված գրությանը կից Նախարարությանն է տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 03.03.2017թ. ժամը 17:00-ին նշանակված ՍՑ-ԳԲԽ-12/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

4. ՍՑ-ԳԲԽ-12/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 14.02.2017թ. թիվ 03/73-3/2280-17 գրությամբ ներկայացված «Դելտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական սարքավորումների, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/47» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դելտա» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող 3-րդ չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին, իսկ 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համարժեք են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությանը կից ներկայացված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/47» ծածկագրով ընթացակարգի գների ամփոփման աղյուսակի՝ «Դելտա» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Նույն արձանագրության 1.1 կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Դելտա» ՍՊԸ-ի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունը շտկելու նպատակով նիստը կասեցնել և առաջարկել շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

5. Պատվիրատուն 01.07.2016թ. և 11.07.2016թ. ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ Ընթացակարգի համապատասխանաբար 6-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Դելտա» ՍՊԸ-ի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունը շտկելու նպատակով հանձնաժողովը նիստը մեկ աշխատանքային օրով կասեցրել է և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապա-տասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է մերժել Ընկերության հայտն Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով նախկինում առաջարկած տեխնիկական բնութագրերում որևէ փոփոխություն չկատարելու հիմքով:

7. Ընթացակարգի հրավերին կից հավելված N 1 տեխնիկական բնութագիրը, մասնավորապես, 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար կազմվել է հետևյալ տեսքով՝

Չ/Հ	Ապրանքի անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
5	Կշեռք էլեկտրոնային	CITIZEN CG 3102 մակնիշի կամ համարժեք, Տարողություն՝ 2-3100գր., չափողականություն՝ 0,01գր., կրկնելիություն (+/-) 0,01գր., ***գծայնություն՝ (+/-) 0,01գր.,*** արձագանքման ժամանակը՝ 2-3վ, տրամաչափարկում՝ արտաքին ավտոմատ:
6	Կշեռք էլեկտրոնային	CITIZEN SSH 94 մակնիշի կամ համարժեք, ***Տարողություն՝ 20 կգ.,*** չափողականություն՝ 0,1գր. կրկնելիություն (+/-) 0,1գր., գծայնություն՝ (+/-) 0,2գր., արձագանքման ժամանակը՝ 2-3վ, տրամաչափարկում՝ արտաքին:

8. «Դելտա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի տեխնիկական բնութագրով սահմանել է՝

• 5-րդ չափաբաժնի համար - համարժեք՝ անալիտիկ կշեռք, մոդել BPS-51 Plus,Boeco GmbH, Գերմանիա, տարողություն՝ 0,5-4500գր., չափողականություն՝ 0,01գր., կրկնելիություն (+/-) 0,01գր., ***գծայնություն՝ (+/-) 0,02գր.***, արձագանքման ժամանակը՝ 1,5վ, տրամաչափարկում՝ ներքին ավտոմատ,

9. 6-րդ չափաբաժնի համար - համարժեք՝ անալիտիկ կշեռք, BWL-60, Boeco GmbH, Գերմանիա, ***տարողություն՝ 10 կգ.,*** չափողականություն՝ 0,1գր., կրկնելիություն (+/-) 0,1գր., գծայնություն՝ (+/-) 0,1գր., արձագանքման ժամանակը՝ 3վ, տրամաչափարկում՝ արտաքին:

10. Պատվիրատուն «Դելտա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ տվել է հետևյալ մասնագիտական եզրակացությունը՝

• 5-րդ չափաբաժնում նշված «Կշեռք էլեկտրոնային» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում պահանջվող ***գծայնությունը (+/-) 0,01գր.*** է, սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքատեսակում ***(+/-) 0,02գր.*** է, որը ընդունելի

չէ, քանի որ էականորեն ազդում է պահանջվող ապրանքատեսակի հիմնական գործողության վրա:

- 6-րդ չափաբաժնում կատարվել է շտկում և «Անալիտիկ կշեռք» ապրանքատեսակ անվանման փոխարեն գրվել է «Կշեռք էլեկտրոնային» ապրանքատեսակ, սակայն տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ հրավերով նշված է ***կշեռքի 20կգ.*** տարողություն կշռելու հնարավորություն, այնինչ մասնակցի առաջարկած ապրանքատեսակն ունի ***10կգ. կշռելու*** հնարավորություն:

11. Ըստ CITIZEN ընկերության www.citizenscales.com պաշտոնական կայք էջի՝ ***«Կշեռք էլեկտրոնային» CITIZEN CG 3102*** մակնիշի ապրանքի համար սահմանված է ***գծայնությունը՝ (+/-) 0,02գր.:***

5. ՍՑ-ԳԲԽ-12/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնն ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.12.2016թ. թիվ 03/73-3/26863-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 14.02.2017թ. թիվ 03/73-3/2280-17 գրությունը, «Դելտա» ՍՊԸ-ի 19.12.2016թ. գրությունը և 03.03.2017թ. առարկությունը՝ կից նյութերով, Կենտրոնի 06.02.2017թ. թիվ 01/04.1/350-17 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ***ներկայացրել է կեղծ տվյալ***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, ***իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում*** այդ որակավորման չափանիշները կամ ***տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական սարքավորումների, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/47» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դելտա» ՍՊԸ-ն:

• Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 5-րդ չափաբաժնով սահմանվել է ապրանքի անվանումը՝ ***«Կշեռք էլեկտրոնային»,*** բնութագիրը՝ CITIZEN CG 3102 մակնիշի կամ համարժեք, որի ***գծայնությունը՝ (+/-) 0,01գր. է:***

Ընկերությունը ներկայացրած հայտի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 5-րդ չափաբաժնի համար նախատեսված գնման առարկայի համար ***գծայնությունը*** սահմանել է՝ ***(+/-) 0,02գր.:***

Պատվիրատուի կողմից «Դելտա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ վերջինիս կողմից 5-րդ չափաբաժնի համար ներկայացված ապրանքատեսակը համարվել է ոչ համարժեք, քանի որ տեխնիկական բնութագրում առկա է եղել անհամապատասխանություն:

Ուսումնասիրելով CITIZEN ընկերության www.citizenscales.com պաշտոնական կայք էջը, պարզվել է, որ 5-րդ չափաբաժնով նախատեսված ***«Կշեռք էլեկտրոնային» CITIZEN CG 3102*** մակնիշի ապրանքի համար սահմանված է եղել ***գծայնությունը՝ (+/-) 0,02գր.,*** մինչդեռ Ընթացակարգի նշված չափաբաժնի տեխնիկական բնութագրով գծայնությունը սահմանվել է ***(+/-) 0,01գր.:***

Կենտրոնը գտնում է, որ նման պայմաններում «Դելտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի թիվ 4.1 հավելվածը՝ 5-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը, չի հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

- Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 6-րդ չափաբաժնով սահմանվել է ապրանքի անվանումը՝ ***«Կշեռք էլեկտրոնային»,*** բնութագիրը՝ CITIZEN SSH 94 մակնիշի կամ համարժեք, որի ***տարողությունը՝ 20 կգ. է:***

Ընկերությունը ներկայացրած հայտի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 6-րդ չափաբաժնի համար նախատեսված գնման առարկայի համար ***տարողությունը*** սահմանել է ***10կգ.:***

Պատվիրատուի կողմից «Դելտա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ վերջինիս կողմից 6-րդ չափաբաժնի համար ներկայացված ապրանքատեսակը համարվել է ոչ համարժեք, քանի որ տեխնիկական բնութագրում առկա է եղել անհամապատասխանություն:

Կենտրոնը գտնում է, որ «Դելտա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 4.1 հավելվածը՝ 6-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում, քանի որ նշված չափաբաժնի համար նախատեսված ***«Կշեռք էլեկտրոնային» ապրանքատեսակի*** համար ***տարողությունը*** սահմանվել է ***10կգ., մինչդեռ Ընթացակարգի հրավերով տարողությունը*** սահմանվել է ***20կգ:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Կենտրոնն արձանագրում է, որ «Դելտա» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը մասնակցելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/47» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, ինչպես նաև Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ ***04.07.2016թ.-ից*** հաշված մեկ տարվա ընթացքում՝ ***08.02.2017թ. և 28.02.2017թ. կրկին հայտեր է ներկայացրել***

համապատասխանաբար «ՇՄԳԲԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-17/1» և «ՇՀԱՊՁԲ-15/16-3-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու համար: Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ ***<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում Ընկերությունը ներկայացրել է կեղծ տվյալ, որը հիմք է «Դելտա» ՍՊԸ-ին</u> գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:***

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 14.02.2017թ. թիվ 03/73-3/2280-17 գրությամբ ներկայացված «Դելտա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00004912) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների վերապատրաստման և խորհրդատվության բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-12/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան